ամէնքը իմանան, թէ որ տեղ կարելի է քննութիւն տալ և օրինաւոր վկայագիր ստանալ երգեցողութեան ուսուցիչ լինելու համար։ Այս հանգամանքը նպաստել է երգեցողութեան յետամնացութեան մեր դպրոցներում։

Ե. Դպրոցների ծախքը։

93—94 ուսումնական տարում բոլոր դպրոցների ծախքը եղել է—90644 ռուբլի։

Զ. Վերաբացուած և նորաբաց դպրոցներ։

Վերաբացուել են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում 6 դպրոց, բացուել են տարուայ վերջը և այս ուսումնական տարում արդէն սկսել են ուսումն 6 դպրոցում։ բացուել էին, բայց թերի մնացին 4 դպրոց։

Բենիկ Վարդապետ։

—✠—

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ.

Վեհափառ Հայրապետն ազգիս զիջանելով Ռումանիոյ Սուլինայ քաղաքի Թաղական խորհրդոյ թախանձանաց, որ շատ ժամանակից ի վեր զրկուած էին հոգևոր մխիթարութիւնից, բարեհաճեց կարգել Արժանապատիւ Մկրտիչ վարդապետ Տէրունեանին այցելու հովիւ և քարոզիչ այն կողմերին, ինչպէս երևում է Հայրապետական կոնդակից Հայր Մկրտիչ պիտի շրջի Ռումանիոյ, Պուլկարիոյ բոլոր քաղաքներ, ուր որ գտնում են հայ գաղթականներ, և ի ստիպել հարկին կարող է շրջել արտաքոյ այս տեղերից դուրս գտնուած քաղաքներ, ուր որ բնակուում են մեր ազգայինները։ Ինքն լաւ գիտէ ֆրանսերէն լեզուն, հմուտ է անգլիականին, իսկ հայերէնի և թուրքերէնի մէջ ևս առաւել հմուտ և գիտակ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԲԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Կառավարչի Թեմին Արցախու Գարեգին վարդապետի Սաթունեան, Համարաւ 500. որով արտօնի նմա բանալ զերկուս օրիորդական դպրոցս ի Նիժ և ի Վարդաշէն գիւղըրայս վիճակին։

Կոնդակ յանուն Փոխ-Թեմակալին Երևանայ Գեր. Անանիա եպիսկոպոսի Համր. 533 որով արտօնի նմա բանալ օրիորդական դպրոց ի գաւթի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն Երևանայ, որպէս պատրաստական մաս Ս. Գայիանեան դպրոցին։

Կոնդակ յանուն Գրիգոր քահանայի Տ. Գրիգորեան Վաղարշապատ գեղջ Համր. 567, որով կարգի նախագահ Հոգաբարձութեան երկսեռ դպրոցաց տեղւոյն։

Կոնդակ յանուն Ս. Սինոդի Համր. 580, որով պատուիրի անյապաղ տալ կազմել ի ձեռն Առաջնորդաց և Հոգևոր Առաջնոց զընդհանուր ցուցակ (շտատ) սրբազնագործ պաշտօնէից Հայ եկեղեցւոյ որք ի Ռուսիայ, առ ի մատուցանել Նորին Սրբութեան մինչ ցյառաջիկայ դեկտեմբեր ամիս։

Կոնդակ շրջաբերական առ առաջնորդս և կառավարիչս վիճակաց, որով պատուիրի յետ այսուառաքել զցուցակ ծառայութեան ստորագրեալ պաշտօնէիցն իւրեանց, որոց վասն միջնորդեն առ ի պարգևատրել։

Կոնդակ յանուն Ներսէս քահանայի Գամազեան Միաբանի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցւոյ Տփխեաց (Կուկիոյ) Համր. 653, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական ըստ միջնորդագրութեան Տեսչի Երկրաչափական դպրոցին Տփխեաց, յորմէ երևի թէ չէ ցուցեալ արգելս ինչ ի կողմանէ Գեր. Առաջն. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրէնեան։

Գրութիւն Վեհ. Կաթուղիկոսի առ Յովհաննէս եպիսկոպոս Տ. Յարութիւնեան միաբան Ս. Էջմիածնի։ Համր. 658, որով պատուիրի նմա ձեռնադրել ի Սևան երիս ընծայացուս 1. դպիր Սարգիս Փիլոյեան ի միաբանակցութիւն վանիցն Սևանայ, 2. դպիր Պետրոս Ալոյեան ի միաբան. Ս. Դանիէլ վանուց Կոփայ Բուլանըք գաւառին Մշոյ, ի կուսակրօն քահանայութիւն. և 3 ընծայացուն Սօլակ գեղջ Դարաչիչակայ զՅարութիւնն Տ. Մովսէսեան ի քահանայ սակս յիշեալ գեղջն։

Կոնդակ յանուն Յովսէփ վարդապետի Սարաճեան ի Դավրէժ Համր. 661, որով կարգի տեղապահ Առաջնորդութեան վիճակին Ատրպատականի ցնոր տնօրէնութիւն. և արտօնի նմա բանալ կեդրոնական դպրոց ի Սալմաստ գաւառի։

Կոնդակ յանուն Ստեփաննոսի Բագիկեան, բնակչի Նոր Բայազիտ աւանի, Համր. 691, որով շնորհի նմա տիտղոս «պատուաւոր Հոգաբարձուի» վասն անձնուէր և օգտաշատ ջանիցն նորա, որ յօգուտ երկսեռ դպրոցաց տեղւոյն ի բազում ամաց հետէ, ըստ վկայութեան Գեր. Փոխ. Թեմակալին Երևանայ Անանիա եպիսկոպոսի։

Կոնդակ յանուն բարեգործ. ընկերութեան Հայոց Փարիզու. Համր. 704, որով օրհնի զջանս նոցա որք ցուցանեն աղքատ ուսանողաց և տարագրելոց ժերազնէից ի Փարիզ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ԵՂԻՑԻՆ Գօտիք ձեր պնդեալ ...: Կ. Վ. . . 349
2. ՍՈՒՐԲ Խաչը . . . Բարկէն . 321
3. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ - Համաչնական . . .
Համաժողովը . . . Կ. Վ. . 324
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 326

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. Սասանեան Տէրութեան պատ- . . .
մութիւն Թ. Նիշոլէ քէի . Թարգմ. Ն. Ք . 339
6. ՄՈՎՍԷՍ Կաղանկատուացւոյ Աղուանից . .
պատմութիւն .... (Շարունակելի) Խաչիկ Վ. . 333
7. ՆԱՄԱԿ Խմբագր. Մեսրովբ Արքեպիսկոպոս . 348

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

8 ՄԻՋՆԱԿԱՐԳ Դպրոցների համար ուսուցիչներ
պատրաստելու խնդիրը . Աբեղայ . . 349
9. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԵԿԱՆ. . Ն. Ք. . . 333
10. ՀՈՒԹՈՒԹԻՒՆ եւ Սամէլ հովիկ Ս. Հայկունի . 334
11. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 364

ԱԶԴԱՅԻՆ.

12. Բարեկարգութիւն եւ բարեզարդութիւն . . 364
13. Վեհափառ Հայրապետի Ս. օծման տարեդարձը 362

ՆԿԵՂԵՑՈՒ ՀԵՌԱՏԱՆԵՑԵՑ 365
ՄԱՍԻ ԱԹՈՌ. . . . . .
1. ԴՈՒՌՍԱՀԱՑՔ . . . . . .
Նրեանի թեմ . . . . . .
2. Նլրոպական գաղութք. . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԵՔ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ
ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ ՀԱՐԱՐԱՏԻ 1895 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՄՍԻ.

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՊԱՆՉԵԼԱՒՈՐԻՆ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԵՒ ՄԻՇՏ ԿՈՅՍՆ.

Յորժամ յիշեմ զԵւայի ստուգկանելն, արտասուեմ. և յորժամ տեսանեմ զպտուղն Մարիամայ, զարձեալ նորոգիմ Անմահ ազգաս, անտեսանելի գեղեցկութեամբ, յառաջ քան զյաւիտեանսն լոյս ի լուսոյ յԱստուծոյ հօրէ ծնար՝ Բան և Որդի Աստուծոյ գոլով, առեր մարմին ի Մարիամայ կուսէ, որպէս զի զստեղծեալն ձեռամբ քով սրբով զԱդամ վերստին նորոգեսցես. Սուրբ, անմահ, յաւիտենական, անհասանելի, անայլայլելի, անյեղի, ճշմարիտ Որդի Աստուծոյ գոլով յառաջ քան զյաւիտեանս՝ հաճեցար սաղմնանալ յարգանդի սուրբ կուսին, որպէս զի զնախաստեղծեալ զմարդն ձեռօք քոյովք սրբովք և սակս մեղաց մեռեալ, զարձեալ կենդանացուսցես։ Բարեհաճութեամբ յառաջագոյնս եցար, բարեհաճութեամբ և կամօք անտեսանելի հօր, վասն որոյ գոչեմք քեզ ամենեքեան, թագաւոր կոչելով օգնական լեր մեր, ծնեցեալդ ի կուսէն և պտեալդ ի խանձարուրս և եգեալդ ի մսուր և կաթնասուն եղեալ ի Մարիամայ, որպէս զի զնախաստեղծն Ադամ սակս մեղաց մեռեալ, զարձեալ կենդանարարեսցէ. Գիտութեամբ ճաշակեալք յաստուածային գիտութենէն բղխեսցուք զքաղցրաձայնութիւնս գոհացողութեան, զքաղցր զօրութիւնս աստուածային բանին փառաւորեսցուք, քաղցրաձայն վարդապետութեամբ աստուածային շնորհին արժանաւոր գոհութիւնս առաքեսցուք, վասն զի երկիր և ծով և ամենայն արարածք տեսանելիք և անտեսանելիք զԱստուծոյ մարդասիրութիւնն օրհնէ և փառաւորէ, վասն եղելոյ ի մէջ բարձրութեան սորա. զի Աստուած գոլով ի մարմնի երևեցաւ և զծայրագոյն խոնարհութիւնն առեալ ծնաւ ի սրբոյ Կուսէն, որպէս զի զվասն ստուգկանութեանն մեռեալ զարձեալ նորոգեսցէ. Դարձարուք, ժողովուրդք, և եկայք զառ ի Կուսէն ծնեալն ամենեքեան օրհնեսցուք, վասն զի փառք և նկարագիր գոլով յառաջ քան զյաւիտեանս աստուածութեանն, նմանաչարչար եղև մեր աղքատութեանս. մեծավայելուչն իշխանութիւն կերպարան Աստուծոյ գոլով զծառայի առ կերպարան. որ արկանէ զլոյս որպէս հանգերձ, ընդ մարդկան շրջեցաւ որպէս գձուձ. որ ի քրովբէից և ի բիւրուց հրեշտակաց օրհնի՝ յաշխարհի քաղաքավարի. որ յառաջ գոլով կեցուցանէ զամենայն արարածս՝ ի սուրբ Կուսէն ծնաւ, որպէս զի զնախաստեղծն վերստին կենդանարարեսցէ. Էառ սկիզբն մարդկութեան Քրիստոս Աստուած մեր անսկզբնակից գոլով Աստուծոյ Հօր, որպէս զի վերածցէ առ անսկիզբն սկիզբն աստուածութեանն զանկեալն մարդ, և առ զծառայի՝ կերպարանս ի սրբոյ Կուսէն, զի զմեզ վերակոչեսցէ ի փառաւորեալ տերունական նկարագիրն. Զգեցաւ զհողեղէն պատկերն, զի հագորդս արասցէ երկնային կերպարանին. ի գիրկս սուրբ Կուսին նստաւ, զի զմեզ ընդ աջմէ արասցէ յատուկն իւրոյ Հօր. ի գձուձ մարմնի եղև և ի ձեռն նորուն եդաւ ի գերեզմանի, զի ժառանգորդս զմեզ ցուցցէ յաւիտենական կենացն. ի յարգանդի սուրբ Կուսին անհասանելին պարուրեցաւ, որպէս զի վասն մեղացն ապականեալն Ադամ նորոգեսցէ. Զօրութիւն Հօր և կենդանի աղբիւր Քրիստոս Աստուած մեր, կենսաբեր է խորհուրդս որ և կենդանի ձայնիւ հաւատացաք, անվախճան կենդանութիւն առատաբար պարգևելով յուսացելոց ի նա, և Հոգւովն շնորհաց լուսաւորելով զազգս մարդկան. յայս ի կենդանի և ի մշտնջենաւոր և ի քաղցրահամ աղբիւրէ, որք միանգամ հաւատով գոն ծարաւիք՝ յագին։ Վասն որոյ և միով ձայնիւ Աստուծոյ Բանին ըստ արժանաւորութեանն ըստ իւրաքանչիւր փրկութեան առթի և պատշաճի՝ երիտասարդաց և ծերոց և մանկանց և կանանց. քանզի ի Մարիամայ յաստուածային աղբիւրէ անճառ աստուածութեանն բղխէ շնորհ և պարգև սուրբ Հոգւոյն։ Ի միոջէ սուրբ Կուսէ բազմագին մարդարիտն յառաջագայեցաւ որպէս զի զվասն մեղաց մեռեալ մարդն նախաստեղծ զարձեալ կենդանարարեսցէ։ Ի արեգակն արդարութեան ի վերայ երկրի երևեալ և մարդային ձևով առ մերս գալ ազգ արժանաւորեաց. թաքուցեալ ի թանձրանիւթ մարդկութեանն զփայլատակող ճառագայթս աստուածութեանն աստուածային հոգւովն լցուցեալ՝ զմեզ և հրեշտակական օրհնութեամբք երգել նմա արժանաւորեաց, Ոսկեփաս ծաղկաք հիւսելովք պսակաբար զանձինս (տնեասիրաց և լսասիրաց ?) պսակել կամելով յանթառամելի բուրաստանաց, զգեղեցկապտուղ ծաղիկն Քրիստոսի մատամբք մատուցեալ՝ կթեսցուք. քանզի արժանի է առատաձանման տաճար սուրբ Կուսին այսպիսի պսակաւ փառաւորել, վասն զի լուսաւորական մարդարիտն յառաջագայի, որպէս զի զիջեալն ի խաւարս և ի ստուերս մահու դարձեալ ի մշտահոս լոյսն վերածցէ. Թունիւք աստուածային բանիցն Քրիստոսի փայլեալք ի նորին շնորհսն՝ արժանաւորս ինչ օրհնութիւնս առաքեսցուք նմա։ Զանմահութեան պտուղս խորհրդոցն կթել փութասցուք. զաստուածազգեստ յարմարութեանն փութասցուք բուրել զհոտ. բանիւք յաստուածային շնորհսն փափկասցուք և զժահահոտութիւն մեղացն ի բաց մերժել փութասցուք, իսկ զանուշահոտութիւն ուղղութեան գործոց զգեսցուք։ Զգրահս հաւատոց զմեօք եդեալք և առաքինի վարուք պատմուճանեալք և զսուրբ և զանաղտ զոգեստ մաքրութեանն պահեսցուք. քանզի սա է առաքինութիւն, խաղաղութեան ընակակից և սիրոյ լծակից և համբնակ ծաղիկ յուսահոտ, և որ զայս հաւատով ճարակեն գառինք՝ զլուսատեսակ գաւազան Երրորդութեանն բղխեն։ Եւ մեք, ով սիրելիք, ի բուրաստանն Փրկչին գիմեալք, աստուածային բանիւք շնորհացն ընդ հրեշտակս զուրախ լեր բերկրեալն ասելով զսուրբ Կոյսն օրհնեսցուք. զի ի նմանէ նախ ծագեաց մշտնջենաւոր լոյսն, որ լուսաւորէ զմեզ բարութեամբն իւրով։

Ինքն հանդիպելով սուրբ Կոյսն և տաճար Աստուծոյ պատուական և քաւարան սրբեալ և ոսկեղէն սեղան ողջակէզ զաց՝ վասն գերազանցեալ իւրոյ